

ըլլար արուեստն, իսկ ոմանք կը կարծէին որ նէ պիտի բերէր հետը այն պակասները՝ որ տարիներով յաջողութեամբ փայլեցուցած իր թատերադրամը զուցէ տար նման պարագայի մէջ, շատ մը կէտեր որ վնասակար կրնային ըլլալ դասական երգչուհիի մը համար։

Ֆայց Տիկ. Լ. Սեւումեան ցոյց տուաւ որ ոչ միայն մեծ գերասանուհի է, այլ նաեւ մեծ երգչուհի դասական գործերու մէջ ալ։

Հայերէն կտորները՝ զորս կրցաւ մեծ յաջողութեամբ արտայայտել, ցոյց տուին հասարակութեան թէ, Հայ ազգի ունի իր երաժշտութիւնն ու զգացումը հաւասար ուրիշ ազգերու։

Կը լսենք վերջը որ Conservatorioի տեսչութիւնը այսպիսի մեծ յաջողութենէ մը հմայուած, և միեւնոյն ժամանակ զոհացում տալու համար անթիւ խնդրանքներու, հրաւիրած է Տիկ. Լ. Սեւումեանը, յառաջիկայ Գոնուարին նոր հանդէս մ'ալ կազմակերպելու։

Այսքան զննատանքի և զբուստեաց քով մենք հը պարտ կը զգանք իբրեւ հայ, և ազնիւ երգչուհի տիկնոջ կը բերենք մեր անկեղծ մաղթանքները նոր անկասկած յաջողութեան մը համար, որպէս զի կարենայ մեր ազգային պանծալի երաժշտութիւնը միշտ լաւագոյն փալով ծանօթացնել օտարներուն։

Միլամ

Ս. ՔԵՐՈՐՈՂԼԵԱՆ



ՄՈՐԻՍ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՍԿԵՄԱՏԵԱՆԷՆ

Մեռնող տարին որքան ալ տխուր և տագնապալից էջ մը թողուց ընդհանուր մարդկութեան և մեր ազգին պատմութեան մէջ, սակայն իր անապատին մէջ իսկ չպակսեցան ժպտուն ծաղիկներ, ինչպէս իր մութ երկնքին վրայ յուսալից աստղեր։

Տնտեսական համաշխարհային տագնապը ուշ կամ շուտ՝ պիտի անցնի իր վերքերով, սակայն մեր հայրենիքը, մեր վաղուան սերունդները պէտք ունին լոյսի և առաջնորդի. և ահա այդ բարձր և սրբազան առաքելութեան կոչուած է այն ազգասէր երիտասարդութիւնը որ իր տոհմային դաս և սրբազան առաքելութեան կոչուած է այն ազգասէր երիտասարդութիւնը որ իր տոհմային դաս տիրակալութեան վրայ կ'աւելցնէ եւրոպական քաղաքակրթութեան բարձրագոյն զարգացումը, զայն ապա ի սպաս դնելու մայր հայրենիքին, ի նպաստ մեր ցեղին։

Այս պատուաւոր խումբին մէջ անշուշտ իր յատուկ թիւն և բաժինն ունի մեր Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի աշակերտութիւնը, որուն անցեալ երկար ու փայլուն ներկայացուցիչներու շարքին վրան պիտի աւելցնենք նորերն ալ, մեծամասնութիւնը խալիլոյ, փառացածը եւրոպական միւս երկիրներու համալսարաններէն վկայուած 1931ի աշնան։

ՄԻԼԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Գասպարեան Կարպիս	Ծն. 1905 Զմիւռնիա	Բժիշկ	(Մուրատեան Սաւ)
Գաւաթեան Արամ	» 1908 Կ. Պոլիս	Ճարտարագէտ	
Պայեան Սիմոն	» 1909 Պաթում	Ճարտարագէտ — քիմիագէտ	(Մուրատեան Սաւ)
Ֆէսճեան Վահան	» 1908 Կ. Պոլիս	»	»

ՓԱԻԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Միմիտեան Միքայէլ	Ծն. 1907 Կ. Պոլիս	Բնալոյծ (Chimiste)	(Մուրատեան Սաւ)
Ճանիկեան Ռաֆայէլ	» Խոտորշուր	Բնալոյծ — Դեղագործ	

ԲԱՐԻՋԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Տողաճեան Գալոբ	Ծն. 1910 Ատաբազար	Առեւտրական	
----------------	-------------------	------------	--

ԱՆՎԵՐՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Երէցեան Վարդգէս	Ծն. 1911 Կ. Պոլիս	Առեւտրական	
-----------------	-------------------	------------	--

ՌԷՄՍԻ ՀԻԻՍՈՒԱԾԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Զըննողեան Արմէն	Ծն. 1912 Զմիւռնիա	Հիւսուածագէտ	
-----------------	-------------------	--------------	--

Ուրախ ենք յայտարարելու որ Մ. Ռ. վարժարանի 1931ի շրջանաւարտներուն մեծամասնութիւնն ալ բարձրագոյն ուսման կը հետեւի զանազան համալսարաններու մէջ։

ՄԻԼԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փաշարենց Հրաչ	Ծն. 1912 Պարտիզակ	Բժշկութեան	(Մուրատեան Սաւ)
Թազըճեան Պետրոս	» 1913 Պրուսա	»	(Մուրատեան Սաւ)
Պիպէրեան Պօղոս	» 1912 Կոստինա	»	(Մուրատեան Սաւ)
Զարեան Վահէ	» 1913 Կ. Պոլիս	»	
Պալեան Արշալիր	» 1913 Ատաբազար	»	
Եփրեմեան Լեւոն	» 1913 Ալեքսանդրիա	»	
Տէր-Մօսիկեան Երուանդ	» 1913 Խարբերդ	»	
Քեօրողեան Գասպար	» 1912 Գրասնոտար	Ճարտարագէտ	(Ռուսիա)

ԲԱԻԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆընտըքեան Գովհաննէս	Ծն. 1910 Պրուսա	Դեղագործութեան	(Շրջանաւարտ 1930ի)
Սիւրմէլեան Գարութիւն	» 1913 Կ. Պոլիս	Դեղագործութեան	

ՊՈՒՏԱԲԵՇԵՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սենքովիչ Գէորգ	Ծն. 1913 Պուտաբէշտ	Ճարտարագէտ	
----------------	--------------------	------------	--

ԲԱՐԻՋԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Երէցեան Նուպար	Ծն. 1913 Կ. Պոլիս	Ճարտարագէտ — Բնալոյծ	
----------------	-------------------	----------------------	--

Ինչպէս կը տեսնուի մեր տուած անուանացանկին մէջ, Մ. Ռաֆայէլեան վարժարանի Տեսչութիւնը երկար տարիներէ ի վեր ինքնաբերաբար ջանացած է վարձատրել ուսման և բարեկրթութեան մէջ յառաջագէտ ձրիավարժ աշակերտները, տրամադրելով անոնց համալսարանական ուսման թոշակ՝ որքան կը ներեն իր տնտեսական պայմանները. թանկագին և բացառիկ շնորհ մը որ իր մեծ դերն ունի ուսման և բարեկրթութեան յառաջագիմութեան զարկին մէջ։

Մեր լիասիրտ շնորհատրութիւնները և երջանիկ ապագայի մաղթանքներ անոնց որ յաջող քննութենէ վերջ մասնագէտ վկայուած են արդէն. և անոնց ալ որ աւարտողներու ուղիէն նոր ներս կը մտնեն՝ յաջողութիւն և փայլուն յաղթանակներ իրենց ընտանեաց և մեր սիրելի ազգին վերականգնումին համար։



Խորին ցաւով պիտի արձանագրենք անունները վաղամեռիկ երկու սաներու որոնք անցնող տարւոյն հետ անդէնականը չուցին։

ՄԱՐԻՄԵԱՆ ՊԱՐՈՅՐ (Ծն. Թիֆլիս 1904 † Միլան 1931, 10 Յունիս)

ԳԱԻԱՖԵԱՆ ՎԱՀԷ (Ծն. Կ. Պոլիս 1906 † Նիս 1931, Նոյեմբեր),

Երկուքն ալ ճարտարագէտ վկայուած Միլանու համալսարանէն 1930 ին։

Հանգիստ իրենց հոգիներուն և երկնային միութարութեան ցօղը իրենց սիրելեաց։

ԽՄԲ.